33. ԽԱԶԲԱՆԴ

Կէղնի, չէղնի մարդ մը ու կնիկ մը։ Մարդ կտանե զուր շլվար քավրոշ մոտ իտա գործ, կմնա շարթե մը սորա կէրթա կիշկե օր մարդ հ՚ոնի չէ։ Քավոր բարձ է դացե։ Կդառնա հետոք, կիգա ուր կնկան կխոսա։

Կնիկ օր լսե, թը քավոր ըռըկե գացե, կասա.—Էլի՛ էրթանք մեր շլվրի կորա ապրանք բերինք։

Կնիկ ու իրիկ կէրթան պտտվին մեշ տան։ Կիշկա օր ապրանք չկա ուր մալի կորա օր բերա։ Կփորե զգետին ու բղիկ մը օսկի կգտնա։ Ըստհաղ կվերուն, կբերին ուր տուն։

Կնիկ կասա.—Մա՛րդ, էդիկ խնձորի չի՞ր ա։

Մարդ կիշկա, կասա.—Էդի օսկի ա, չիր չէ։

Կասա.—Ես պտի զէդի էփիմ խոշաբ։

Կասա.—Չէ՛, կնիկ, էդիկ օսկի է, մ՚էփի։

Ըստհաղ կբերա դրա վըր կրակին, կէփա։ Կիշկա՝ մարդու մեկ էն դիեն էկավ։

Կասա.—Մարդ աստուծո, արի աչքա, ես բղիկ մը օսկի գտեր իմ, կնիկ չկեռնամ վրեն, կասա՝ կէփիմ։

Կիշկա էդ մարդ հովիվ ա էդի։ Հովիվ կխոսա, կասա.—Կնի՛կ, էդի մ՚էփա։

Զարա չէղնի կնկա վրեն, կդրա զօսկին, կէփա։

Ըստհաղ կասին.—Ախը՛ր, էդի օսկի չէ, կերակուլ ա։

Ճանգ մը օսկի կիտան հովիվին, կասա.—Ընձի օշխար մի տաս։

Կասա.—Արի տես, քու ուզածին առ արի։

Կէրթա, խեղճ լղար, գեշ մաքի մը կառնի ու ետ կդառնա, կբերա ուրին։ Կրերա ու կիգա ուր տուն, կմորթա, կքերթա, կմանդռա կինա ուրին կերակուլ։

Մարդ կնկան կեսա.—Կնի՛կ, հ'էլի էրթանք սար։ Մեր կերակուլ էփած թըմմած ա, էրթանք սար, ակռախրդիչք բերինք օր հաց ուտինք ու ատամ խորթինք։

Կէլնին, զդուռ կգոցե, զբալնիք կդնա վըր սողնիկին ու կէրթան։ Կէրթան, շատ կէրթան, քիչ կէրթան, փունշ մը խոտ կգտնան։ Կառնա զէդ փունշ խոտ ու հետոք-հետոք կիգա։ Կիգա, կիշքե օր չարչի մարդ մը կիգա։ ռաստ։

Կասա.—Մարդ աստծու, դու հ'ո՞ւստեն կիգաս։

Մարդն կասա.—Օլորտելուց։

Կասա.—Ես գացեր ենք, ընձի ակռախրդիչք կբերենք, չէղնի էրթաս իմ տուն, իմ կերակուլ պատրաստուկ ա, իմ դուռն գոցված ա, իմ բալնիք դրուկ կրիչկի վրեն։

Չարչին կէլնի ու կիգա։ Կիգա չարչին էդ մարդու տուն, ուր կերակուլ զմեն կուտա, յազմա կէնա։ Հետոք կէլի, կէրթա։ Սորա չարչին զդուռ էն տեսակ կգոցա։

Էդ մարդ ու կին օր գացած ին սար, էկան։ Էկան դուռ բացելուն, դուռ գոցուկ էր, իգա հազ կբանա զդուռ, կիգա ներս։ Կիգա կտեսնա օր կերակուլ պուտկեն դարտըկված էր։ Կէրթա տաշտ կիշե օր հաց հ'ոնի չէր։

Իրիկ կասա.—Աչեբ, կնիկ վո՞րն ա կերե զէդա կերակուլ։

Կնիկ կասա.—Ես ի՞նչ գինամ, ուրիշ մարդ չէկի ներս։

Կիշքին օր ճանճ մը դրուկ վեր տաշտին։

Կնիկ կասա.—Մա՛րդ, մըր տուն չմըտե, հա իգա ճանճն ա կերե զմեր կերակուլ։

Մարդ կվերու զկացին, կզարկա ճանճին օր թը սպանե, չքիսի ճանճին, զարկա զտաշտ կոտրե։

Իդա հազ կիգա ճանճ կթռնա վըր չուդի պուտկին։

Մարդ կզարկի զպուտուկ կկոտրե։

Մարդ կասա.—Հա՛յ կնիկ, իգա ճանճն ա կերի զմիր կերակուլ, զարնիմ ու կոտրիմ։

Ճանճ կթռնա, կդրա վըր էդ մարդու կնկա գլխուն։

Մարդ կասա.—Կնի՛կ, դու զքու գլուխ խայիմ բռնա, իգա ճանճն ա կերի զմեր կերակուլ, էկավ դրից վըր քու գլխուն, պտի

զարկիմ ու զէդ ճանճ սպանիմ։ Կնի՛կ, աստծու խաթրին էղնի, զըմեն բան ջարթեցի, էդ ճանճ իմ ձեռք չի դար։

Կղարկա կացին մե ու կնկան կասա.—Ձքու գլուխ խայիմ ռնա։

Կղարկա կացին, ճանճի վրա չքիսի, կղարկա զուր կնկա գլուխ կփլխցու, կձևա։ Կնիկ կմեռնի։

Մարդ, ուր կնիկ օր մեռավ, կէլի զուր հուր ու մուր կքոմա։ Ուրին կէղնի էրկու ձեռք դոշակ, կէղնի ուրին բարոշ մը, կէղնի ուրին օլախ մը։ Կբառնա զուր հուր ու մուր վըր իշուն։ Կառնի ուրին ու հետոք-հետոք կէրթա։ Ընդան ճամբախ ու գնաց։ Մարդ կիշե օր իշու վրեն դոշկի ճոթ կէրթա ու կիգա։ Կառնա զչախուն, փարչե մը դոշկի ճոթեն կկտրա, կասա.—Քու տիրու հերն անիծվի, քու տեր մեռեր ա, դու հարսնիք կէնիս։

Հաղմ՝ լէ կիշկե հետոք օր բարոշ կշնգոդա, կվերու զբարոշ, կդրա գետին, կասա.—Ձքու տիրու պապ շուն ք..., քու տեր մեռեր է, դու կշնկոդա՞ս ու կծիծղա՞ս ու դու վրես կծիծղա՞ս։

Մարդու մը մեկ էն դիեն կիգա, կասա.—Բարև քեզ։

Կասա.—Աստծո՛ւ բարին։

— Հ՚որի՞ դրիր էն բարոշ գետին։

Ըսից.—Ուր տեր մեռեր էր, էդի զուռնա կփչեր, կծիծղեր վրես։

Ըսից.—Էդ բարոշ տուր ընձի։

Տվից էդ մարդուն։

Ըսից.—Ի՞նչ կուզիս, ըդ բարոշի գին։

Ըսից.—Քինե կուզիմ մեկ հատ սիսեռ։

Ու առավ զէդ սիսեռ ու թալեց օլախի անկաճ։ Ու սորա օլախ գնաց քիչ մը, արտի մը չափ գնաց։ Իդա հաղ տեսավ օր օլախ գնաց կանավ ու զռաց։

Կիգա ջրի պռուկ ու կղարկա օլխուն, օլախ տիռ մե կթորկա, կասա.—Է՛յ, քու տեր մեռեր ա դու հարսնիք կէնի՞ս։

Կղարկա զուր էշ կփթցու։ Կհանա մարդ զուր հալըվներ վերևեն։ Իսդախս էկի գետու ափ։ Իդա հաղ կքշտապնտվի, օր կարնա ջրու միջե հ՚ընցնա գիտու ընդեն։ Կընցնա զջուր ու տկլոզ կընըստի վըր գիտու փլին։ Կիշկա օր մարթ մե էն դիեն խաղ ասիլեն կիգա։ Կիգա կկանի էդ չլուտ մարդու մոտ։ Կասա.—Ախպե՛ր, բարև քզի։

Կասա.—Աստծո՛ւ բարին։

— Իմա՞լ էկեր իս հոս։

Կասա.—Գործ չունի՛ս, զիմ խելքն իմ կորցի, էկեր իմ հոս։

Կասա.—Աստված սիրիս օր դու զքու գլխու գալած խսա էնիս։

Ըդ չլութ մարդ զուր գլխու գալած խսա կէնե ըդ մարդուն։

Կասա.—Մա՛րդ աստծու, հ'էլի էրթանք թագավորի մոտ։ Ես թագավորու առջևու խըզմաթքարն իմ, հ'էլի էրթանք քզի խալավ թը խաքուն։

Կէլին ջուխտ բարաբար կէրթան։ Թագավորի դարգախ կկանին։

Կիշկա օր մարդ մը վազման էկավ հասավ, կանավ ըդ էրկու մարդու քով։

Կասա.—Ի՞նչ մարդ իք, կաներ իք իդա թագավորի դարգախ։

Կասա.—Ես խելար իմ, մեկ լէ խըզմաթքար ի։

Կէլնին իրեք բարաբար կէրթան։ Կէրթան ու թագավորու հ'առջ կկանին։

Թագավոր ուր հ'առջևի խըզմաթքարին կհարցու, կասա.—Էդ ի՞նչ մարդ էր դու բերիր էկար։

Խզմաթքար չխոսա։

Ըստհաղ թագավոր կասա.—Ըղ մարդ չխոսա, չիփլախ մարթ, դո՛ւ խոսա, դու ի՞նչ մարդ իս։

Իդա հաղ ըսեց.—Ես խելար իմ, էկեր իմ քու քով կաներ իմ։

Օր խոսաց, թագավոր ըսեց.—Ես քզի պտի վերում ու տանիմ խազերու հետ դնիմ։ Էրթաս ու դու զիմ խազեր պահիս։

Ըսեց.—Գացեք իրեք փերթ հալավ բերեք։

Վերիցին հալավ սև էղնի, օրթլախի հալավ կարմիր էղնի, թումբան օր կհաքնի, ճերմակ էղնի։

Հագուց շորեր ըդ խելար մարդուն ու տարավ խազերու հետ դրից։ Մարդ առավ զխազեր ու պըտըտվավ չոլ։ Քառսուն օր չէկավ չոլեն։ Պտտվավ սար ու գնաց օրերուց օր, գելու մի բնի հ'առջ նստավ։ Էկավ իրկուն ուր քնելու վախտ ու մարդ քնավ։ Գել էկավ ու մեկ բռնեց էդ խազերուց ու տարավ ուր բուն։ Կտանա ուր բուն, կդրա հ'ոնի։ Մարդ, կես գիշեր էղավ, կարթնընա։ Իդա հաղ կէլի ու զուր խազեր կհամրա, կհամրա ու կիշկա օր մեկը հ'ոտի չէ։ Ըստհաղ կասա. «Աչեպ, ըդ իմա՞լ էղավ ըդ խազ»։ Նստավ հարի լուս ու մտածեց։ Լուացավ։ Գնաց օլորտավ, կանավ գելու բնի գռան հ'առջ, ըսեց. —Գել, հ'ո՞րի զքու դուռ գոցեր իս։

Ըսեց.—Հեռուն կանի իսնե, ես գելմ՝ իմ, սարի ջանավար, օր էլիմ հ'ոցքի, զքզի կփարատիմ։

Իդահաղ մարդն ըսեց.—Դու սարի ջանավարմ՝ իս, հ՚ո՞րի ընձի կփարատիս, ես խելար մարդմ՝ իմ։

Մարդ մեկ լէ խոսաց, ըսեց.—Դե՛լ, ես խելար իմ ու թագավորի խաղրանդ, բա՛ց զքու դուռ ու զիմ խաղ թո՛ր, թը իգա։

Գել կբերի զխաղ դռան հ՚առեջ կկանկցու ու կբռնա զպոչ ու չթորկա։

Կասա.—Դե՛լ, թո՛ր թ՚իգա, թը չէ՝ կէրթամ, թագավորին կխոսամ։

Գել կասա.—Գնա, քու թագավորին ասա, արի զքու խաղ տար։

Իդահաղ գել զխաղ կտանի ներս։ Մարդ լէ կքաշվի հեռուն կկանի։ Մարդ կառնի զուր խաղեր ու հ՚ոցքի կէրթա։

Կէրթա ու կէրթա ու տեխ մը կդրա։ Ընդեխ կհանգստանա ու կվերու, կառնա զուր խաղեր ու կէրթա։ Գիշեր ու ցերեկ ըդ խաղի համար կմտածա։ Կնստի սարի գլոխ ու աղեկ մը կիշկա։ Կիշկա օր ինչ կիշկա՝ խաղ մի կիգա ուր հ՚առեշն կկանի։

Կասա.—Խաղբանդ, հ՚որի՞ էդըմլա կիլաս աստծու չաթին չիգա։

Կիշկա ըստհաղ, կեսա.—Իմա՞լ չիլամ, թագավոր պըտի զիմ գլուխն ղարկա. ուր խաղն ա կորի։

Կէլի կիգա, կքոմա զո՞ւր խաղեր ու կխամրա։

Կիշկե օր հարիրեն մեկ հ՚ոդի չէր, կորեր էր։

Իդահաղս մարթ կասա.—Աստված, դու ընձի չարա էնիս, ես իմա՞լ թագավորին պատասխան իտամ, իմա՞լ խոսամ օր սեիրես չէլնիմ։

Դեղին օտներ ճնճուղ մե, էկավ մարթու հ՚առեջ կանավ։ Կասա.—Մա՛րդ, էլի քոմե զթագավորի խաղեր ու գնա, ըդ ծառի քով նստի։

Մարդ էլավ քոմեց առավ զխաղեր ու գնաց հ՚ոնի։ Նստավ ծառի հով, ճնճուղ էկավ կանավ ուր հ՚առեշ։ Իդահաղ խոսեց.—Ինչ տեխ կէրթամ կօլորտիմ թագավորի խաղ չգտնամ, մտածեց ու ըսեց.—Տե՛ր աստված, դու իմ ամանաթն առնես։

Մարդն քոմեց զխաղեր ծառի հով ու պառկավ քնավ. մըշ էրըղին տեսավ օր Բաշոգի բուն դրուկ ծառի վերին դեն, իդահախս իրտավ քնավ ու իմցավ։ Ու իշեց վերին դեն, իդա Բաշոգ ծրտեց ու մարդու մեկ աչք քոռցավ, իդահախս մարդ ըսեց. «Իմ մեկ աչք լէ քոռցավ, ես իմա՞լ էնիմ»։

Իդահաղ աստծուց աղաչեց, նստավ հ՚ոնի ու հաղ մը լէ լաց,

ըսեց.—Տէ՛ր աստված, օր գու չարէ մը չէնիս, մարդ չարա չէնա։

Հ՝իրկուն էկավ, հանդէ մարդ քնելու վախտն ա, օր պտի քնի, քնավ, ուր քնու մեչեն էլավ նստավ։ Բաշոգ ծառի վրրևեն ըսեց,— Է՛յ, զարմանելի խոդածին, հ՝որի՞ կմտածիս։

Ըսեց.—Հ՝իրկուն կիգա օր ես պտի քնիմ, թագավորի խազեր պտի ստեխէն կորին։

Իդահաղ ըսեց.—Մա՛րդ, ըն կորուկ օր թը գտնուս, ըստեխան կկորի։

Իսդախ մարդն էր, մութն էկավ ու պառկավ։ Պառկավ ծանր մը քնավ։

Բաշոգ իշեց իսդախ օր մարդ պառկեր ա ու ծանր քներ ա։ Իսդախ ըսեց.—Հ՝որի՞ դու սուտ քուն իս առի՛ քու վրեն։

Իրեք բերան հավորիկ խոսաց ըդ մարդուն։ Մարդ քնուկ էր, պատասխան չտվեց։ Բաշոգ վերին տեխեն զարկեց վրը էդ խազերուն, զարկեց, հ՝մեն փախան գացին, էն հարիրեն մեկ օր կորիր էր, մինակ ըդ մնաց։ Մարդն էլավ նստավ, իշեց օր Բաշոգ գետին էր, իսդախ ըսեց. —Բաշո՛գ, դու զթագավորու խազեր իմա՞լ էնեցիր։

Իդահաղ Բաշոգ ըսեց.—Մա՛րդ, գնա տես խազեր քոմված ու նստած ծառի հով։

Մարդ գնաց իշից օր ծառի տակ քիչ մը թեբոր քոմուկ ու դրուկ հոն ու դարձավ հետ էկավ ու Բաշոգին խոսաց.—Բաշո՛գ, ես գացի ու իշեցի, խազեր էնտեխ չէր։ Քիչ մը թեբոր կեր հ՝ոնի։

Իսդախ, Բաշոգ վերին տեխեն խոսաց, ըսեց.—Մա՛րդ, գնա թեբորներ քոմա՛, տար գելու մոտ։

Մարդ էլավ, քոմեց թեբորներ, լըցեց տոպրակ մը ու գնաց կանավ գելու քով։ Գնաց կանավ գելու դռան հ՝առեշ ու մտածեց։

Մարդ խոսաց, ըսեց.—Գե՛լ, իմ մեկ խազ թոր թ՝իգա։

Գել ըսեց.—Հեռեցի՛ իմ դռան հ՝առջևնեն, հ՝ո՞րի իս էկի կանե հոն։ Մա՛րդ, գնա զքու խազեր քոմա առ էկո իմ դռան հ՝առեջ, իտահախս իս զիմ դուռ կբանամ։

Իսդախ մարդ բերեց ուր տոպրակ բացեց ու թեբորներ տվեց գելուն շանցք։ Գել զխազ թորկեց ու զէդ խազու թեբորներ առավ ներս։

Խազբանդ կանավ ըդ մեկ խազու վրեն շատ մը մտածեց։ Քիչ մը ուրին մտածեց։ Ըսեց.—Աչե՛ր, ի՞նչ բան կէղնի օր ես իդա մեկ խազ տանիմ թագավորին։

Մարդ էլավ գրկեց զուր խազ ու ինգավ ճամբախ ու գնաց։ Գնաց թագավորի դարգախի դուռ կանավ։ Թագավորի լալեն տեսավ ու ներսեն էլավ, ըսեց.—Խազբա՛նդ, դու բարի էկար։

Ըսեց.—Աստծու բարին։

Ըսեց.—Հարի էս վախտ ո՞ւր իս էզի։

Ըսեց.—Տարեր ենք զխազեր կարծցենք։

Ըսեց.—Խազեր ի՞նչ տեխն ին։

Ըսեց.—Իդա մեկ խազն է օր գիրկս է. բաշոգ զարկեց ու ցիր ու ցան էնեց։

Ըսեց.—Հարիր հատեն էդ մե՞կն ա մացե աչեր։

Ըսեց.—Հա՛ վոլա, հարիրեն էդ մեկն ա մացե։

Ու լալեն էդ մարդու քովեն հետ դարձավ։ Գնաց թագավորին ու խոսաց։

Ըսեց.—Թագավոր ապրա՛ծ, խազբանդ ըդա քանիլի տարի կորեր ա, ըսօր էկեր ա։

Ըսեց.—Իսկի խազ չբե՞րեր ա։

Ըսեց.—Հարիրեն մեկ հատ ա մացե։

Ըսեց.—Գացեք զէդ մարդ առեք ու բերեք։

Ու գացին զմարդ առին ու էկան։ Ու էկավ թագավորի հուզուր կանավ։

Թագավոր ըսեց.—Խազբա՛նդ, ի՞նչ տեսակ էներ ես խազեր։

Իրիք բերան թագավոր խոսաց։ Խազբանդ չխոսաց։ Ու թագավոր ճամբեց զուր լալեն կանչեց։

Վոզիրն ըսեց.—Դու հ՚ո՞րի չխոսես էդ մարդու հ՚էտև։

Ու մարթ ըսեց.—Ի՞նչ խոսիմ, թը չ՚ավատաք՝ իշեք աչքս լէ քոռ ա։

Մեկ լէ թագավոր ըսեց.—Խազբանդ, խազեր ինչպես էրեր ես, հ՚ո՞րի իմ պատասխան չըս իտա։

Մարդ դարձավ լալին իշկեց։ Մարդու լեզուն ըդ տեխ բռավավ։

Իստախ թագավոր լալին ըսեց.—Վերցե՛ք տարեք մափուս էրեք։

Տարան ու գացին զխազբանդ մափուսի մեջ ցքեցին։ Մարդ տարան ու խելարներու քով գրին։ Իշեց էն մեկ կոզմ խելար էր, մեկ՝ սավախ էր։ Իսդախ մարդ նստավ ու մտածեց ու ըսեց.—Տե՛ր աստված, ես իմա՞լ էնիմ, ի՞նչ չարա գտնամ, թագավոր իմ գլոխ պտի զարկա։

Խազբանդ դարձավ բոլոր ժողովրդին ըսեց.—Մեկդ մե խաղ մի ըսեք։

Մարդ պատասխան չտվեց.—Հ՝մեն խելար, էն լէ խելար։ Բի-թուն խելար ին քոմուկ։ Ու նստավ ու մտածեց։ Գիշեր ու ցորեկ ձեռով կէներ, մեկ ձեռ կբանձրացներ, մեկ լէ կիջեցներ։

Մոլե մի ընտեխ նստուկ էր, հարցուց ըսեց.—Մարդ, հ՝ո՞րի, էտվլա գիշեր ու ցորեկ կէնիս, էդ ի՞նչ դավի ա։

Իդա հաղ մարթ մոլին պատասխան չտվեց։ Մոլեն շիվարավ վըր էդ գործին։ Իդա հաղ մոլեն նամակ մի գրեց ու թագավորին ճամբից։ Գրեց թուղթ, ըսեց. «Քու խազբանդ հ՝մեն օր էս տեսակ, էդ տեսակ կէնա, էդ ի՞նչ դավի ա»։

Բերին զթուղթ թագավորու հ՝առեջ կարդացին։

Թագավոր ըսեց.—Գացե՛ք, խազբանդին ըսեք՝ էդ ի՞նչ բան ա, թ՝ըսե՝ ես զէնի կթորկիմ։

Իդա հաղ գացին ու խազբանդից խարցուցին։ Ըսին.—Թագավոր կըսա քու էութեն մըզի ըսե օր քզի թորկա։ Խազեր լէ քըզի կրաշխա։

Մարդ պատասխան մեկեն չտվեց։

Մարդեսներ շիվարան ու հազմ՝ լէ գացին թագավորին ու ըսին.—Թագավո՛ր ապրած, խազբանդ մըզի պատասխան չիտա։

Էդ տեխ թագավորն ըսեց.—Գացե՛ք բռնեք ու բերեք հոս։

Գացին բռնեցին ու բերեցին հոն։ Բերեցին ուր հ՝առեջ ու կանգըցին։

Թագավորն ըսեց.—Մա՛րդ, դու ինչ մարդ իս, օր ես քենի՞ հաղ է օր քըզի կասիմ խոսա, դու՝ չըս խոսա։

Մարդ չխոսաց։

Թագավորն ըսեց.—Մա՛րդ, քըզի բան մը չէնիմ, խոսա։

Ու մարդ սոն-սոն լեզու առավ ու խոսեց։ Ըսեց.—Թագավոր ապրած, ես քու խազեր չըմ կերեր ի։

Ըսեց.—Բա իմա՞լ էդեր է իմ խազեր։

Ըսեց.—Ես էրգում կէնիմ օր դու ավտընաս, ես քու խազեր չըմ կէրեր ի։

Ու էրդվաց, ըսեց.—Քու տան հաց, մեր տան հաց՝ ես քու խազեր չըմ կերեր ի։ Ըսեց.—Էրկնողաց, թոնդրան կողաց՝ ես չըմ կերեր իմ։ Ըսեց.—Էդ էրթում էրեցի, ավտրցա՞ր։

Սորա մեկ լէ ըսեց.—Թագավոր ապրած, էրգում լէ կէնիմ

.քզի.—ըսեց.—Էրկնողաց, թոնդրան կողաց, քու մամն իմ մամն ա, .քու կնիկ իմ ճժերու մամն ա։

Թագավոր խոդախ ըսեց.—Ինչ տեսակ էղնի, որ էդպես իմ մամ՝ քու մամն ա, իմ կնիկ՝ քու ճժերու մամն ա։

Իդա հախս խազբանդ ըսեց.—Խոդախ իմ գործ լմնցեր ա։

Լոլե մը ճամբեց թագավորու խըզմաթչի մը խանչեց էկավ, .էկավ հ՚ոդի ու ըսեց.

— Բռնե՛ք զէդ մարդ, տարեք ու գացեք, տարեք թալեք։ Թա-լեք քառսուն դազկան հորի մը մեջ։

Տարան ու զէդ մարդ թալին քառսուն գազկան հորի մը մեջ ու բերեցին հագին քարեր խորին վրեն լցուցին ու լեցուցին։ Դար-.ձան էկան թագավորին ըսին.—Տարանք զէն մարդ ու քառսուն գազկանի հորի մի մեջ ձգեցինք ու խոշոր քարեր վրեն դիզեցինք, հոր լենցավ։

Շաբաթ մի սորա գացին ու իշիցին։ Իշին օր կռնի ծառ մը բուսե էլեր ա քարերու մջեն։

Իդահաղուս թագավորի լալեք էկան ու խսա էնեցին թագավո-րին, ըսին.—Կռնի բուն մը քարերու մեջեն բուսած, ահագին ծառ .մը էղեր ա։

Թագավոր ըսեց.—Ամեկ մարդ օր ըդ ծառի մոտեն կընցնա .լոզ մի ղարկա, թուք թքա վըր կռնի փլին։

Ու գացին կանան ճամփու վրա ու խոսացին, հ՚ընցնող-դար-ձողին, թը՝ վոր օր ուր աստված կսիրա, լոզ մի թըղ զարկա ու .թուք մի թքցու վըր էդ կռնի ծառին։

Մարդեր էկան ամեկ թուք մի թքավ, լոզ մե զարկավ, էրկու .լալեք լէ գացին ու թագավորին խսա էրին։

Թագավոր ըսեց.—Գացե՛ք, փլի .բոլոր կանեք, չէղնի օր խըլխ իգա ու բան մը փրցու ու տանի։

Գացին ու կանան կռնի փըլի կշտներ ու ամեկ կոշմ՝ առան ու վանան։ Իդահաղ էկավ իրկուն ու լալեք քնան։ Քնան ու լուսուն շուտ էլան ու թագավորի քով էկան։ Խոսացին.—Թագավո՛ր, ապ-ցած կենա, հարի լուս պահեր ինք, մարդ չէկե, չմոտեցե։

Թագավոր անիծեց ու ըսեց.—Թուք ըդ ծառի էրեսին էղնի, լոզ չէ վըր էն կռնի բնին էղնի, ըդ մարդու սերունդ անիծուկ էղնին։

Ուրանք հասան ուրանց մուրազին, դու լէ հասնիս քու մուրա-զին։

Հ՚էրկնուց իրեք խնձոր պատավ. մեկ՝ ասողին, մեկ՝ լսողին, մեկ լէ՝ անկանչ էրողին։